

տեն Մէշէղի մէջ: «Անոնք այսպէսով ձեռք պիտի բերեն Պարսկական բանակին հանդերձեղէն հայթայթելու գործը, պայմանաւորուելով Շահին գլխաւոր վաճառականներուն հետ բաւարարել բոլոր կարիքներուն ամբողջ այս մեծածաւալ եւ բազմամարդ վերոյիշեալ երկիրներուն եւ հայթայթել անոնց բրդեայ ապրանքներ: Եւ ասիկա՝ անոր համար, որ ոչ մէկ ժողովուրդ, բացի Մեծն Բրիտանիոյ ժողովուրդէն, կրնայ այս երկիրները գոհացնել առատ բրդեղէնով եւ ածան գնով, նոյն ատեն ի վիճակի ըլլայ իրենց հում մետաքսին լաւ գին մը տալ, ինչպէս նաեւ ուրիշ բերքերու համար, որոնցմով առատ է այս երկիրը: Այս ամէնը կը գնահատուի պարսիկներէն եւ հայերէն՝ գրաւելով առաջնոյն (պարսիկներուն) ուշադրութիւնը, եւ արթնցնելով միւսներուն (հայոց) վախը: Այս նկատողութիւնն էր որ անտարակոյս կշռեց գահաժառանգին վրայ, որ այդքան հեշտութեամբ մեզի ընծայեց առանձնաշնորհումներ, որոնք ես ձեռք բերի Բրիտանական վաճառականներուն համար անցեալ տարի, ինչ որ ան (գահաժառանգը) հաստատեց իր հրովարտակով: Կիւանէն մեկնելէս անմիջապէս վերջ, Հայոց պատրիարքը (Հայրապետ կամ Կաթողիկոս իմաստով) ուժեղ կերպով իր ժողովուրդին համար գահաժառանգին ազերս մատոյց, որպէսզի այդ հրովարտակը ետ առնել տայ: Սակայն, իր ազերսանքները հակառակ արդիւնք տուին, որովհետեւ գահաժառանգը նոյնը վերահաստատեց. եւ, երկրորդ անգամ ըլլալով հրաման զրկեց Ռէշտի կառավարիչին, որ (հրովարտակի) ամէն կէտերուն համար ալ խիստ ուշադիր ըլլայ»: 4)

Որոչ է, որ էլիօն ոչ միայն շատ լաւատես է ապագային համար, այլ եւ չափազանց խանդավառ, երբ կը խորհի, թէ միայն բրիտանական վաճառականները կարող են յաջողիլ Պարսկաստանի հայթայթելու իրենց ապրանքները եւ այդ երկիրին հում ապրանքները սպառելու մեծ գործին մէջ:

Թուրքիոյ Բրիտանական ընկերութեան մասին ալ մեծ համարում մը չունի ան եւ ցոյց կուտայ Ռուսիոյ Բրիտանական ընկերութեան իր կողմնակցութիւնը: «Մէշէղի, Գիւլանի եւ Հիւսիսային Պարսկաստանի գաւառներու ճանապարհներուն յարմարութիւնը կարող պիտի ընէ Ռուսիոյ ընկերութիւնը Թուրքիայէն աւելի ածան գնով հնում մետաքս ներածել (Անգլիա): Անոնք (Ռուսիոյ ընկերութիւնը) ուղղակի նոյնիսկ արտադրող գաւառներուն մէջ պիտի կարենան գնել (հում մետաքս), մինչդեռ Թուրքիոյ վաճառականները երկրորդ ձեռքէ՝ թուրքերէ եւ հայերէ պիտի գնեն ապրանքը, որ կը բերեն Հալէպ, Կ. Պոլիս, եւ Ջմիւռնիա, ուր կը վաճառեն գնի մեծ յաւելումով: Պէտք է նկատել, որ Պարսկաստանի արեւելեան նահանգները այս բերքէն (հում մետաքս) շատ աննշան քանակութեամբ կ'արտադրեն: Ատիկէ դատ Ռէշտի մէջ Շահին գլխաւոր վաճառականը մերժեց թուրքերուն եւ հայերուն հում մետաքս հայթայթել: Անոնք անցեալ տարի Գիւլան եկած էին մետաքս գնելու համար որեւէ քանակութեամբ, բացի գընէն: Եւ ան բացարձակ հրաման ունէր մետաքս չծախել Թուրքիա արտածուելու համար, եթէ ուրիշ չուկայ կրնար գտնել»: 1)

Արդարեւ, Նատիր Շահի բռնած այս ինքնազինաս ընթացքը իր գահակալութեան 1736-47-ի շրջանին մեծ կորուստ պատճառեց հում մետաքսի հայ վաճառականներուն եւ անոնց կործանման գլխաւոր պատճառը եղաւ: Բնական է, որ այս զրութիւնը նոյաստաւոր էր էլ գոնի եւ իր Ռուսական ընկերութեան:

Սակայն, անդին կային նաեւ այս ընթացքը բնազատող անգլիացի վաճառականները, ինչպէս Հանուէյ, որոնք դէմ արտայայտուեցան էլիօնեան մտայնութեան, ինչպէս որ քեզ վերջ պիտի տեսնենք:

John Harris Նատիր Շահի բռնած տնտեսական քաղաքականութեան մասին կը գրէ. — «Երբ Նատիր Շահ կայսրութեան տիրա-

4) Անդ՝ էջ 25:

1) Անդ՝ էջ 26: